

Թիւն» (?) ինադ անել նշանակում է ջիգր անել:

«Բայց Թողալը բալայ ա» բալայ բաղատուած է Վը-տանգաւոր (?), խաթարալայ, բալայ նշանակում է ցաւ դարդ Լայլն:

Յանկալի է, որ պ. Հայկ Տէր-Աստուածատրեանցը հետզ-հետէ ճոխացնէ իւր ժողովածուն, բաղատութիւնները ճշտէ և պնդէս հրատարակութեան տայ:

10. Հոռվմայեցի իմաստասէր Էդիկ ՏԵՏԻ կեանքն ու վարդապետութիւնը. Թարգմ. ԶԱԴԷՆ վարդապետ. Ս. Էջմիածին. 1903. 135 էջ. գ. 40 կոպ.:

Մեր օրերում, երբ մարդիկ ոչ մի միջոցի մէջ խորութիւն չդնելով՝ հարստութեան, պատուի, փառքի և զեղխութեան են ձգտում, երբ կեանքի վայելչութիւնը մարդկանց ապրելու նպատակն է դարձել և այդ նպատակին հասնելու համար գործ են դրում ամեն տեսակ անաշխիւ միջոցներ, մի տեսակ հոգեկան մխիթարութիւն ես գտնում՝ կարգալի վաղուց անցած դարերի, անհաստեքի պարզ ու անպաճոյճ կեանքն ու վարքը, նրանց փիլիսոփայական անխառն և սառը դատողութիւնները՝ մարդկային կեանքի ունայնութեան ու ոչնչութեան վրայ:

Ահա այսպիսի անհաստեքի կարգին է պատկանում հոռվմայեցի փիլիսոփայ Էպիկտետը, Էպափրօգիտեսի նախկին ստրուկը, որ հետեւելով Ստոյիկեան վարդապետութեան, կարճ ժամանակի ընթացքում մեծ հռչակ ստացաւ իբրեւ ուսուցիչ՝ իւր շիտակ բնաւորութեամբ և բարոյական վարք ու բարքով: Նա իւր ամբողջ կեանքն անցկացրեց աղքատութեան մէջ. նրա խըրճիթը դուռ ու փականք չունէր. փայտեայ նստարանը, խտրը և կաւէ ճրագը կալմում էին նրա տան ամբողջ կահ-կարասիքը նրա սկզբունքն էր. «պէտք չէ տունը զարդարել, որովհետեւ դրանով միայն աշխատում ենք ուրիշներին զարմացնել. խելօք մարդը գեղեցկացնում կամ զարդարում է ոչ թէ տունը, այլ իւր հոգին բարութեան և ճշմարտութեան հասկացողութեամբ»: Առհասարակ նորա գրոյցները լի են մարդկային հոգեկան յատկութիւնների ուսումնասիրութեամբ, բարոյական բարձր գաղափարներով և կեանքի փորձառութեամբ. նրա արտայայտուած մտքերի նման ոճն էլ պարզ ու անպաճոյճ է. «Սիրելի



բարեկամ, առաջ քո ցանկութիւններն անկեղծ էին, հասկացողութիւնդ, պարզ, յստակ և արարքներդ բարի. դու կարդում էիր իմաստալից զրբեր և ուրախանում, ցնծում էիր Սոկրատէսի և Դիոգինէսի նման մարդկանցով. իսկ այժմ ուրախանում ես քո այն բարեկամներով, որոնք բեղ դէպի անառակութիւն են առաջնորդում, անբարոյականացուցիչ զրբեր ես կարդում և քո խօսքերն ու գործերն ամօթալի են... սխալում ես, սիրելի բարեկամ, դու կորցրել ես ամէնից կարևորը. չլինի՝ թէ մտածում կամ կարծում ես, որ կորուստները միայն նիւթական են լինում. ո՛չ, կան աւելի վատ կորուստներ, հոգեկան կորուստներ՝ պարզ և մաքուր միտք, լաւ ցանկութիւնների, բարի վարք և այլն. այժմ դու այդ ամէնը չես տեսնում, որովհետեւ մոլորուել ես. Յիշիր, իմ թշուառ բարեկամ և փրկիչ բեղ հենց ամենից առաջ բեղանիցեթէ ինձ հետ մի որեւեցե դժբախտութիւն պատահէր. չէ՛ որ կօղնէիր ինձ. ինչո՞ւ բեղ չպիտի օգնես, մանաւանդ որ այդ անելու համար չպէտք է ոչ ոքի ոչ ձանձրացնես, ոչ ծնծես, ոչ էլ սպանես. պէտք է միայն մտածես, խորհես և խօսես ինքդ բեղ հետ. դու բեղ աւելի սիրով և ուրախութեամբ կը լսես քան ուրիշներին. լսիր ուրեմն քո խղճի ձայնին և քո խելքին. զննիր ինքդ բեղ ինչպէս որ պէտք է...» (էջ 22—23):

«Բո ընկերոջ բոլոր գաղտնիքները պատմիր ինձ. կասէ, կը ստիպէ ինձ իմ թշնամին:

Ո՛չ, ես այդ չեմ ասի բեղ, կը պատասխանեմ ես. որովհետեւ իմ բարեկամի գաղտնիքներն ասելը կամ չասելն ինձնից է կախուած. Բայց բեղ կը շղթայեմ և աքսոր կուղարկեմ, եթէ ընկերոջդ գաղտնիքները չասես:

Ի՞նչ ես ասում, դու ինձ չես շղթայի. կը շղթայես միայն իմ ոտները, ձեռքերը, իսկ ինձ, իմ հոգուն, իմ կամքին, իմ մըտքին չես կարող շղթայել. որովհետեւ բացի ինձանից ոչ ոք յո՛ժ, կարողութիւն չունի նրանց վրայ իշխելու. Խորհուրդ ենք տալիս ընթերցողին կարդալ այս գրքը կը. Հայր թարգմանիչը մոռացել է յիշել թէ ո՛ւմ աշխատութիւնն է թարգմանութիւնը և ի՞նչ լեզուից (էջ 74—75):

11. ԱՐԱՅԻ. Գերընական հիւանդութիւն. Թիֆլիս 1903.

25 էջ. գ. 20 կոպ.:

Մեղքս ինչ թագցնեմ, երբ խմբագրութեան ուղարկուած